ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 6 - Ն

2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ ավագանու հաստատմանը ներկայացվեց Դդմաշեն համայնքի 2018թ. տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի վարչական բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի նախահաշվի /խումբ 01.6.1/ հատուկ նպատակային նյութերի 4269 հոդվածից պակասեցնել 250.0 հազար դրամ, և այն հաստատել 1750.0 հազար դրամ:

2/ Համայնքի վարչական բյուջեի նախադպրոցական կրթության ծախսերի նախահաշվի /խումբ 09.1.1/ սուբսիդիաներ «Դդմաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին 4511 հոդվածից պակասեցնել 940.0 հազար դրամ, և այն հաստատել 18100.0 հազար դրամ:

3/ Համայնքի վարչական բյուջեի համայնքապետարանի ապարատի պահպանման ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ աշխատավարձի 4111 հոդվածին ավելացնել 1050.0 հազար դրամ, և այն հաստատել 22350.0 հազար դրամ:

4/ Համայնքի վարչական բյուջեի համայնքապետարանի ապարատի պահպանման ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ պարգևատրումների 4112 հոդվածին ավելացնել 105.0 հազար դրամ, և այն հաստատել 1855.0 հազար դրամ:

5/ Համայնքի վարչական բյուջեի համայնքապետարանի ապարատի պահպանման ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ համակարգչային ծառայությունների 4232 հոդվածին ավելացնել 35.0 հազար դրամ, և այն հաստատել 212.0 հազար դրամ:

2. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերի նախահաշվի /խումբ 06.4.1/ փողոցային լուսավորության 5113 հոդվածից պակասեցնել 714.2 հազար դրամ, և այն հաստատել 6100.0 հազար դրամ:

2/ Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերի նախահաշվի /խումբ 01.1.1/ վարչական սարքավորումների 5122 հոդվածին ավելացնել 414.2 հազար դրամ, և այն հաստատել 414.2 հազար դրամ:

3/ Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերի նախահաշվի /խումբ 06.4.1/ նախագծահետազոտական ծախսերի 5134 հոդվածին ավելացնել 300.0 հազար դրամ, և այն հաստատել 500.0 հազար դրամ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ				
Տողի N	**Ծախսերի անվանումները**	**նախ. ցուցա-նիշները**	**նախ. կատարված փոփո-խությունները**	**սույն նախ. հաստատվող ցուցա նիշները**
01.1.1	**Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավ., այդ թվում՝**	**31720.0**	**+1190.0**	**32910.0**
	4111 - աշխատավարձ	21300.0	+1050.0	22250.0
	4112 – պարգևատրումներ	1750.0	+105.0	1855.0
	4232 – համակարգչային ծառայություններ	177.0	+35.0	212.0
01.6.1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, այդ թվում՝**	**3050.0**	**-250.0**	**2800.0**
	4269 - հատուկ նպատակային նյութեր	2000.0	-250.0	1750.0
09.1.1	**Նախադպրոցական կրթություն, այդ թվում՝**	**19040.0**	**-940.0**	**18100.0**
	4511 - սուբսիդիաներ համայնքային կազմակերպություններին	19040.0	-940.0	18100.0
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ				
01.1.1	Համայնքապետարանի ապարատի պահպանում			
	5122 – վարչական սարքավորումներ	-	+414.2	414.2
06.4.1	**Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն**	**7014.2**	**-714.2**	**6300.0**
	5113 – փողոցային լուսավորություն	6814.2	-714.2	6100.0
06.4.1	5134 – նախագծահետազոտական ծախսեր	200.0	+300.0	500.0

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Թադևոսյան Գառնիկ
2. Կիրակոսյան Հրահատ
3. Հովհաննիսյան Գուրգեն
4. Մելքոնյան Զավեն

Համայնքի ղեկավար՝ **Ավետիս Ավետիսյան**